ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «05» 02 2021թ № 104-Ա

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ, 2021 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N2215-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությունը և ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N658-Լ որոշման հավելվածի 11-րդ կետի 17-րդ ենթակետով և 18-րդ կետի 21-րդ ենթակետով

հրամայում եմ.

1. Հաստատել՝

1) «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2021 թվականի ծրագիրը»՝ համաձայն N 1 հավելվածի.

2) «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2021 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը» ՝ համաձայն N 2 հավելվածի.

3) «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2021 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը»՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության

Scanned by TapScanner

պետի տեղակալ Անահիտ Խեչոյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը նախարարության պաշտոնական կայքէջում:

3. Նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ Մարի Գրիգորյանին՝ հրամանը հաստատվելուց հետո ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

4. Նախարարության զբոսաշրջության կոմիտեի գլխավոր քարտուղարին՝

Սույն հրամանը հաստատվելուց հետո 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ սահմանված կարգով ապահովել 2021 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով կազմակերպության ընտրության մրցութային հանձնաժողովի ստեղծումը:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

Scanned by TapScanner